

21.06.2021թ.

ք. Երևան

«ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 018741/05

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ «ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 21.06.2021 թվականի թիվ 18741 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 18741 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր՝ Բելլա Հարությունյանը (ՀՎՀՀ՝ 32527593, հասցե՝ «ք. Երևան, Սիլիկյան 7 փողոց 17Ա) «Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 170⁶ հոդվածի 1-ին մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

«ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Բելլա Հարությունյանի կողմից 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները 21.06.2021 թվականի դրությամբ չի ներկայացվել:

Այն փաստը, որ Բելլա Հարությունյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33-րդ, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 170⁶ հոդվածի 1-ին մասի՝ Բելլա Հարությունյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 10.000 (տասը հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականություն կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագործ մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել «Վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: